ՀՀ-ՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ներդրումների ներգրավումը մակրոտնտեսական կայունության, տնտեսական զարգացման և արդյունավետ տնտեսական կառուցվածքի ապահովման կարևոր ցուցիչ է: Ներդրումային գործունեության՝ մակրոտնտեսական կայունության վրա ազդեցության խնդիրը չափազանց արդիական է հատկապես զարգացող երկրներում, այդ թվում՝ նաև ՀՀ-ում: Վերարտադրության գործընթացում ներդրումների ներգրավման արդյունավետությունը ուղղակիորեն կախված է վերջինիս ճիշտ տեղաբաշխումից: «Աճի նոր աղբյուրների» բացահայտումը կայուն աճ ապահովելու հիմնական գործոններից մեկն է:

Տնտեսական աճի շարժընթացը հնարավորություն է տալիս գնահատելու տնտեսության զարգացման հնարավորությունները, տնտեսավարողների կենսամակարդակը, ինչպես նաև սահմանափակ ռեսուրսների օգտագործման արդյունավետության աստիճանը: Տնտեսական աճի պայմաններում տվյալ տնտեսությունում աստիճանաբար պետք է լուծում ստանա սահմանափակ ռեսուրսների օգտագործման խնդիրը և բավարարվեն համեմատաբար ավելի շատ պահանջմունքներ: Ինչպես հայտնի է, տնտեսական աճի գրավականը արտադրական գործընթացի որակական և քանակական կատարելագործումն է, իսկ նպատակը՝ զարգացման և մակրոտնտեսական կայունության ապահովումը: Վերջինս ենթադրում է ոչ միայն քանակական, այլև որակական աճ: Ընդ որում, տնտեսական աճի որակի հիմնախնդիրը արդիականություն ձեռք բերեց, երբ զարգացող երկրների քանակական տնտեսական աճը կանգնեց նոր մարտահրավերների առաջ: Ըստ Ու. Ռոսթոուի՝ զարգացած երկրների տնտեսությունները սպառման ապրանքների արտադրության փուլից անցում կատարեցին «կյանքի որակ ապահովելու» փուլին: Պարզ քանակական տնտեսական աճը աստիճանաբար իր տեղը զիջեց որակյալ աճին, և «աճի տեմպերի ապահովումը» ուղեկցվեց որակական շարժընթացներով[1]:

Տնտեսական աճի քանակական կողմը հատկապես զարգացող երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, տարիներ շարունակ գերագնահատվել է: Այսինքն, «նախ՝ քանակ, ապա՝ որակ» մոտեցումը

[1] Տե՛ս **Rostow W. W**. The Stages of Economic Growth: A Non-Communist Manifesto. Cambridge Univ. Press, էջ 4-16, 1960:

սկզբունքային առումով արդեն իսկ արդյունավետ չի աշխատում, ուստի տնտեսական քաղաքականությունը անհրաժեշտ է կառուցել դրանց համադրման սկզբունքով: Թեպետ զարգացող երկրներում տնտեսական աճի քանակական կողմը դեռևս շարունակում է պահպանել առաջնահերթությունը, այնուամենայնիվ, մակրոտնտեսական հավասարակշռության և կայուն տնտեսական աճի ապահովման հիմնախնդիրների լուծումը անհրաժեշտ է որոնել քանակական ու որակական զարգացման միասնական տիրույթում[2]: Այսպիսով, տնտեսական աճի արդյունքները պետք է ապահովեն զարգացման նախադրյալներ երկարաժամկետ կտրվածքում, բարձրացնեն բարեկեցության մակարդակը և ապահովեն «սերունդների համերաշխ զարգացումը»:

Աճի որակը դրսևորվում է իր շարունակականության, հավասարակշռվածության, արտաքին գործոններից կախվածության մեջ չլինելու հանգամանքով և զարգացման ցուցանիշների վրա ունեցած դրական ազդեցությամբ: Աճի որակի վերլուծության համար անհրաժեշտ է գնահատել տնտեսական աճը մի շարք չափորոշիչներով, այդ թվում՝ ժամանակային, տարածքային, ճյուղային, վերարտադրողական և այլն: Ընդ որում, տնտեսական աճը ավելի որակյալ կլինի, եթե ներդրումները թե՛ տարածքային, թե՛ ոլորտային, թե՛ ժամանակային և նորարարական չափորոշիչներով արդյունավետորեն տեղաբաշխվեն: «Արտադրողականությունը ամեն ինչ չէ, սակայն երկարաժամկետ կտրվածքում այն համարյա ամեն ինչ է…»: Արտադրողական տնտեսությունը «խելացի աշխատող» տնտեսությունն է, այլ ոչ թե «շատ աշխատող» տնտեսությունը: Այսինքն՝ արտադրողական է այն տնտեսությունը, որը նոր տեխնոլոգիական լուծումների, գաղափարների և բիզնես մոդելների շնորհիվ կարողանում է արտադրել շուկայի պահանջներին համապատասխանող բարիքներ[3]:

Ըստ այդմ, առանձնացվել են տնտեսական աճի նկատմամբ «զգայուն» տնտեսության ոլորտները, որոնք կարող են նպաստել աճի որակի բարձրացմանը և մակրոտնտեսական հավասարակշռության ապահովմանը: Գնահատվել է նաև ներդրումների ազդեցությունը տնտեսության կառուցվածքի և տնտեսական աճի որակի վրա և առանձնացվել տնտեսության իրական հատվածի այն ոլորտները, որոնք ներդրումների տեղաբաշխման առավել արդյունավետ ուղղություններ են:

Մասնավորապես, վերջին տարիներին հանրապետությունում արձանագրված տնտեսական աճը բնորոշվել է որպես ոչ որակյալ. տնտեսությունը կառուցվածքային առումով կատարելագործման կարիք ունի: Ներկա տնտեսական իրավիճակում տնտեսության աճի դրական տեմպերի ապահովումն անգամ բարդ խնդիր է: Իսկ տարիներ շարու-

---

[2] Տե՛ս **Հ. Ի. Աղաջանյան**, Տնտեսական աճի որակը, «2012–2013 թթ. ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն», Եր., 2014, էջ 17-18:

[3] Տե՛ս The Future Of Productivity, OECD, 2015, էջ 11-12:

նակ արձանագրված «քանակական տնտեսական աճի» ազդեցության արդյունքում տնտեսությունը որակապես կատարելագործվել է այնքանով, որքանով «թույլ են տվել» տնտեսության կառուցվածքն ու իրականացված ներդրումների արդյունավետությունը մակրոմակարդակում: Երկրի տնտեսական աճի կառուցվածքում որակական տեղաշարժերը ապահովվել են արտահանման ներուժ ունեցող ոլորտների զարգացման շնորհիվ: Իսկ հետճգնաժամային տարիներին թե՛ ՀՆԱ-ի և թե՛ տնտեսական աճի կառուցվածքում էական փոփոխություններ են արձանագրվել. շինարարության տեսակարար կշռի նվազումը փոխարինվել է գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտների որոշ ենթաճյուղերի հարաբերական աճով: Եվ չնայած արձանագրված առաջընթացին՝ ՀՀ տնտեսական աճի կառուցվածքը ճկուն և արդյունավետ չէ, զարգացումը ոլորտային բնույթի է, ինչն էլ հրատապ է դարձնում տնտեսական աճ ապահովող ներդրումների ներգրավումը: Մակրոմակարդակում ներդրումների անարդյունավետ տեղաբաշխումը չի կարողացել լուծել առկա կառուցվածքային խնդիրները հանրապետությունում: Եթե անգամ ներդրումները տնտեսությունում տնտեսական աճ և նոր հավասարակշռության վիճակ ապահովել են, ապա դա եղել է կարճաժամկետ և ոլորտային:

Տնտեսության կառուցվածքի ազդեցությունը տնտեսական աճի վրա ներկայացնելու համար հաշվարկվել է գործակից, որի միջոցով գնահատվել է տնտեսության ոլորտների՝ տնտեսական աճին նպաստելու աստիճանը՝ արդյունավետությունը:

$$\text{Գործակից} = \frac{\text{Ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում /\%/}}{\text{Ոլորտի ՀՆԱ-ի աճին նպաստման չափը /\%/}} = \frac{\text{Ոլորտ}}{\text{ՀՆԱ}} \div \frac{\Delta\text{Ոլորտ}}{\Delta\text{ՀՆԱ}} = \frac{\Delta\text{ՀՆԱ}}{\text{ՀՆԱ}} \div \frac{\Delta\text{Ոլորտ}}{\text{Ոլորտ}} = \frac{d\text{ՀՆԱ}}{d\text{Ոլորտ}} = E_{\text{ոլորտ}}$$

Գործակիցը ցույց է տալիս տնտեսության ոլորտային առաձգականությունը: Այսինքն՝ թե ինչպես է տնտեսական աճը արձագանքում տնտեսության կառուցվածքային փոփոխություններին: Ոլորտը առաձգական է, եթե $E_{\text{ոլորտ}} > 0$: Գործակցի տատանման արդյունավետ միջակայքն է $0 < E_{\text{ոլորտ}} < 1$: Ապրանքների առաձգականությունը դիտարկելիս նկատի ենք ունեցել, որ այդ միջակայքին պատկանող ապրանքները առաջին անհրաժեշտության ապրանքներն են, իսկ ոլորտային առաձգականության դեպքում՝ տնտեսության այն ոլորտները, որոնք համարվում են որակյալ տնտեսական աճ ապահովող հիմնական ոլորտներ, կարելի է նաև որակել որպես «առաջին անհրաժեշտության»:

Ստացվում է, որ եթե մինչճգնաժամային ժամանակահատվածում տնտեսական աճի նկատմամբ առաձգական ոլորտներ էին համարվում շինարարությունն ու ծառայությունները, ապա հետճգնաժամային զարգացումները էականորեն փոխել են տնտեսական զարգացման որակը: Տնտեսական աճի նկատմամբ առավել առաձգական է դարձել

գյուղատնտեսության ոլորտը, զգալիորեն բարելավվել է արդյունաբերության ցուցանիշը, իսկ շինարարության ոլորտում իրավիճակը շարունակաբար վատթարացել է: Եվ դա այն պարագայում, երբ գյուղատնտեսության ոլորտը տնտեսությունում առանձնանում է խիստ արտահայտված ցածր արտադրողականությամբ:

Աղյուսակ 1[4]

Տնտեսության ոլորտային առաձգականության դինամիկան 2004-2015 թթ.

	$E_{գյուղ.}$	$E_{արդյ.}$	$E_{շին.}$	$E_{ծառ.}$
2004	0.7	5.2	0.8	0.8
2005	1.0	1.9	0.6	1.2
2006	22.6	-22.4	0.4	0.9
2007	1.4	3.6	0.8	1.1
2008	5.5	4.5	1.0	0.8
2009	0	-1.8	-0.2	0
2010	-0.2	0.3	0.7	0.6
2011	0.4	0.4	-0.3	0.8
2012	0.7	1.1	1.5	1.1
2013	0.5	0.5	-0.5	0.9
2014	0.4	-5.9	-0.6	0.6
2015	0.22	0.4	-0.9	0

Ներդրումների ներգրավման տեսանկյունից տնտեսության իրական հատվածի հիմնական ոլորտների զարգացման հնարավորությունների բացահայտման նպատակով հաշվարկվել է նաև մեկ այլ գործակից, որով փորձ է կատարվել գնահատելու տնտեսության ոլորտում ներդրումների տեսակարար կշռի փոփոխության ազդեցությունը ՀՆԱ-ում ոլորտի տեսակարար կշռի փոփոխության վրա:

$$\text{Գործակից}_{\text{ոլորտ}} = \frac{\Delta\%\ \text{Ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում}}{\Delta\ \%\ \text{Ներդրումների տեսակարար կշիռը ոլորտում}} > 0$$

Եթե գործակիցը բացասական է, նշանակում է տվյալ ոլորտում ներդրումների տեսակարար կշռի աճի արդյունքում ՀՆԱ-ում վերջինիս տեսակարար կշիռը նվազել է, այսինքն՝ ներդրումները չեն նպաստել ոլորտում ավելացված արժեքի աճին: Սակայն գործակցի դրական արժեքը դեռ չի վկայում ոլորտում իրականացված ներդրումների արդյունավետության մասին: Կրկնակի անկման դեպքում գործակիցը դրական արժեք կունենա, այսինքն՝ պետք է հետազոտել նաև առանձին փոփոխականների շարժման ուղղությունը: Բացարձակ առումով ինչքան մեծ լինի վերոնշյալ գործակիցը, այնքան ավելի արդյունավետ են եղել ոլորտում իրականացված ներդրումները: Այսինքն՝ ներդրումների հաշվին կառուցվածքային առումով տնտեսությունը կատարելագործվում է:

[4] Այս և հետագա աղյուսակները կազմվել են հեղինակի հաշվարկների հիման վրա:

Աղյուսակ 2

	Գյուղատնտեսություն			Արդյունաբերություն		
	Ողորտը ՀՆԱ-ում /%/	Ողորտը ներդր. /%/	$\frac{\Delta 1}{\Delta 2}$	Ողորտը ՀՆԱ-ում /%/	Ողորտը ներդր. /%/	$\frac{\Delta 1}{\Delta 2}$
2004	22.6	0.0	-	19.1	41.7	-
2005	18.8↓	0.01↑	-380	18.7↓	46.8↑	-0.08
2006	18.1↓	0.1↑	-7.8	17.9↓	39.9↓	0.12↓
2007	17.5↓	0.0↓	6.0↓	15.7↓	47.3↑	-0.3
2008	15.9↓	1.9↑	-0.8	13.1↓	49.1↑	-1.4
2009	16.6↑	0.9↓	-0.7	13.8↑	35.1↓	-0.05
2010	16.9↑	0.8↓	-3	14.9↑	49.0↑	0.08
2011	20.3↑	0.5↓	-11.3	17.1↑	52.1↑	0.71
2012	19.1↓	4.9↑	-0.3	16.9↓	37.0↓	0.01↓
2013	19.6↑	1.4↓	-0.1	17.1↑	42.9↑	0.03↑
2014	19.7↑	0.8	-	17.2↑	78.5↑	-
2015	17.3↓	1.1	-8	16.3↓	55.8	0.04↓

Աղյուսակ 3

	Շինարարություն			Ծառայություններ		
	Ողորտը ՀՆԱ-ում /%/	Ողորտը ներդր. /%/	$\frac{\Delta 1}{\Delta 2}$	Ողորտը ՀՆԱ-ում /%/	Ողորտը ներդր. /%/	$\frac{\Delta 1}{\Delta 2}$
2004	15.5	1.1	-	34.4	57.0	-
2005	21.6↑	4.1↑	2.03	32.4↓	49.1↓	0.25↓
2006	24.5↑	3.9↓	-14.5	32.3↓	56.1↑	-0.01
2007	25.6↑	0.2↓	-0.3	32.5↑	52.5↓	-0,06
2008	26.9↑	0.3↑	13.0	34.7↑	48.7↓	-0.58
2009	17.6↓	0.1↓	46.5↓	43.1↑	63.9↑	0.55
2010	16.9↓	0.5↑	-1.75	41.9↓	49.7↓	0.08↓
2011	13.0↓	0.4↓	39.0↓	41.2↓	47.0↓	0.26↓
2012	12.5↓	2.4↑	-0.25	42.7↑	55.7↑	0.17
2013	11.2↓	5.18↑	-0.47	43.2↑	50.6↓	-0.09
2014	9.8↓	3.4	-	44.0↑	17.4	-
2015	9.5↓	1.7	0.18↓	48.1↑	41.4	0.17

Ինչպես ցույց են տվել 2004-2015 թթ. համար հաշվարկված ցուցանիշները, մինչճգնաժամային ժամանակահատվածում տնտեսության իրական հատվածում իրականացված ներդրումները արդյունավետ չեն եղել: Խոսքը հատկապես արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում ներդրումների մասին է: Թեև հետճգնաժամային շարժընթացը արդյունաբերության ոլորտում դրական է, սակայն գյուղատնտեսության ոլորտը շարունակում է մնալ թերֆինանսավորված:

Նկատելի է, որ 2004-2015 թթ. ՀՀ տնտեսությունը կառուցվածքային տեսանկյունից զգալիորեն ձևափոխվել է՝ պայմանավորված տնտեսության իրական հատվածի երեք ոլորտներում՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն և շինարարություն, արձանագրված կառուցվածքային տեղաշարժերով: Կրելով նոր տնտեսակարգի ձևավորման բոլոր հնարավոր ռիսկերը՝ անկախացման երկու տասնամյակում Հայաստանը, իհարկե, կարողացել է զարգացման որակապես այլ հարթություն տեղափոխվել: Համախառն առաջարկի՝ ՀՆԱ-ի կառուցվածքը և զարգացման շարժընթացը դիտարկելիս պարզ է դառնում, որ մինչճգնաժամային ժամանակահատվածում տնտեսական աճը ապահովելու կարևոր գործառույթը իր վրա է վերցրել շինարարության ոլորտը՝ իրեն սպասարկող մյուս ենթաճյուղերի հետ միասին, իսկ ՀՀ տնտեսության իրական հատվածի մյուս երկու ոլորտները՝ գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը, որակապես չեն զարգացել և չեն կատարելագործել իրենց կառուցվածքը, թեև ծավալային առումով որոշակի տեղաշարժեր ապահովել են: Ավելին, հայրենական որոշ տեսաբաններ, հաշվի առնելով շինարարության՝ ոչ արտահանելի ոլորտ հանդիսանալու հանգամանքը, ՀՀ տնտեսության մինչճգնաժամային ժամանակահատվածը որակել են որպես կորցրած հնարավորությունների ժամանակաշրջան[5]: 2005-2008 թթ. ընթացքում ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում անընդհատ աճել է՝ 2008 թ. ապահովելով ՀՆԱ-ի ավելի քան 1/4-ը: Կառուցվածքային առումով ցրված ցուցանիշ է արձանագրվել ծառայությունների ոլորտում, իսկ գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում ցուցանիշների շարժընթացը տնտեսական աճի կառուցվածքի աստիճանական փոփոխության պատճառ է դարձել: Հետճգնաժամային տարիներին թե՛ ՀՆԱ-ում և թե՛ տնտեսական աճի կառուցվածքում էական փոփոխություններ են արձանագրվել. շինարարության տեսակարար կշռի նվազումը փոխարինվել է գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտների որոշ ենթաճյուղերի աճով:

Ծառայությունների ոլորտի դերակատարումը երկրի տնտեսության զարգացման գործում էական և կարևոր է եղել թե՛ մինչճգնաժամա-

---

[5] Տե՛ս **Գ. Ղարիբյան, Ա. Մարկոսյան, Բ. Ավագյան,** Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա և հակաճգնաժամային միջոցառումները, «Տարեգիրք 2011», Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր., էջ 120:

յին և թե՛ հետճգնաժամային տարիներին: Ճյուղում արձանագրվել է ՀՆԱ-ի աճի տեմպը գերազանցող աճի միտում: Տնտեսության իրական հատվածի զարգացման և ներդրումների ներգրավման տեսանկյունից ծառայությունների կառուցվածքային առանձնահատկությունները դիտարկելը ևս կարևոր է: Մասնավորապես, 2015 թ. մատուցված ծառայությունների կառուցվածքում զգալի տեսակարար կշիռ են ունեցել տեղեկատվության և կապի (17.4 %), ֆինանսական և ապահովագրական գործունեության (23,6 %), տրանսպորտի (12.6 %) ծառայությունները: Վերջիններիս դերը բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման, նոր ներդրումների ներգրավման առումով շոշափելի է: Ծառայությունների ոլորտում ֆինանսական և ապահովագրական գործունեության մեծ ծավալները վկայում են ֆինանսական միջնորդության խորացման մասին. միայն բանկային ծառայությունների մատուցմանը բաժին է ընկնում ամբողջ ծառայությունների 83.3 %[6]:

Զգալիորեն ձևափոխվել է նաև տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների կառուցվածքը: Վերջինս տնտեսական աճի աղբյուրների հիմնական ցուցիչն է: Համաձայն վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքների՝ կատարված օտարերկրյա ներդրումների առյուծի բաժինը կենտրոնացվել է տնտեսության երկու՝ արդյունաբերության ու ծառայությունների ոլորտներում: Իսկ հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող գյուղատնտեսության ոլորտում ներդրումներն աննշան են: Ոլորտում զբաղվածները կազմում են բնակչության ընդհանուր թվի 45,6 %, ինչը վկայում է, որ գյուղատնտեսությունը Հայաստանում նաև սոցիալական մեծ նշանակություն ունի: Տարիներ շարունակ ոլորտը անտեսված է եղել ներդրողների կողմից, միայն 2006 թ.-ից սկսեցին մասամբ ուշադրություն դարձնել նաև այս ոլորտին: Ինչպես վկայում են աղյուսակ 2-ի տվյալները, ոլորտում ներդրումների կտրուկ աճ արձանագրվել է 2008 թ. 23.8 մլն դոլար (ներդրումների մոտ 1.9 %-ը)՝ պայմանավորված կառավարության հակաճգնաժամային միջոցառումներով, սակայն 2009-2011 թթ. ընթացքում ներդրումները աստիճանաբար կրճատվել են, իսկ 2012 թ.՝ արձանագրված ցուցանիշը անգերազանցելի է եղել ՀՀ տնտեսական իրականությունում՝ 36.4 մլն դոլար՝ կլանելով ներդրումների շուրջ 4.8 %-ը: 2013 թ. ցուցանիշը կրկին զարգացման նախկին վարքագիծն է կրկնել՝ կլանելով ներդրումների ընդամենը 1.4 %-ը: Եվ դա այն դեպքում, երբ գյուղատնտեսության ոլորտը արտադրում է ՀՆԱ-ի մոտ 1/5-ը և ապահովում ՀՆԱ-ի աճի 1/4-ը՝ աշխատելով գերցածր արտադրողականության պայմաններում: Իսկ արտահանման մեջ էլ ունի 5 %-ը չգերազանցող մասնաբաժին: Հաշվի առնելով տնտեսությունում առկա ներուժն ու արձանագրված զարգացումները՝ գյուղատնտեսության ոլորտը արտահանման ներուժի ընդլայնման հնա-

[6] Տե՛ս ՀՀ ԱՎԾ հրապարակումներ:

բավորություններ ունի, որոնք ցայսօր չեն օգտագործվում:

Ոլորտի զարգացման մեջ մեծ է վերամշակող արդյունաբերության դերը: Բանն այն է, որ բուսաբուծության և անասնաբուծության ոլորտների փուլային գործընթացների աճը որոշակիորեն ազդում է մթերք վերամշակող արդյունաբերության զարգացման վրա, իսկ վերջինիս ակտիվացումն ու արտահանման ծավալների աստիճանական ավելացումը կնպաստի գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդիրը մեղմելուն և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը: Այն, ըստ վիճակագրական տվյալների, 40-45 % է կազմում, որը չի կարող ապահովել արդյունավետ վերարտադրություն, ինչով էլ պայմանավորվում են տնտեսությունների կայունությունը և գյուղական բնակավայրերում աղքատության հաղթահարման հնարավորությունները[7]:

Շինարարության ոլորտում ևս կապիտալի ներհոսքերը շարունակվել են, թեև վերջինիս տեսակարար կշիռը զգալիորեն զիջում է արդյունաբերության և ծառայությունների ոլորտների համապատասխան ցուցանիշներին: Իհարկե, այս ոլորտի հաշվին ՀՀ տնտեսությունը տարիներ շարունակ կարողացել է երկնիշ տնտեսական աճ ապահովել, այնուամենայնիվ, ոլորտը, որոշ վերապահումներով, արտահանելի չէ և տնտեսական անվտանգության տեսանկյունից արդյունավետ չէ հիմնվել միայն այս ոլորտի վրա: Հարկ է նշել, որ շինարարության աճը տարիներ շարունակ նպաստել է սպասարկող տնտեսության այլ ենթաճյուղերի զարգացմանը: Ճգնաժամի դրսևորումներով պայմանավորված՝ շինարարության անկումը ոչ միայն ուղղակիորեն է ազդել ՀՆԱ-ի անկման վրա, այլ նաև զսպել վերջինիս սպասարկող տնտեսության այլ ենթաճյուղերի զարգացումը: Փաստորեն՝ շինարարության անկումը տնտեսական աճի վրա բազմակի ազդեցություն է ունեցել: Անշուշտ, շինարարությունը համակարգաստեղծ ոլորտ է և տնտեսական աճի ապահովման հիմնական ուղղություն, սակայն պետք է հաշվի առնել նաև ներոլորտային զարգացման առանձնահատկությունները: Հայ տեսաբանի մեկնաբանություններում շինարարությունը բնորոշվել է որպես տնտեսության բացառիկ ճյուղ, որի ուղղակի ազդեցությունը տնտեսության մյուս ճյուղերի վրա չափազանց մեծ է: Համաձայն տեսաբանի գնահատականների՝ շինարարության փոխկապակցված ճյուղերում շինարարության աճով պայմանավորված պահանջարկի մեծացումը լրացուցիչ պահանջարկի բեռնվածք է ապահովում հանքագործական և մշակող արդյունաբերության ևս 5 մեծ ճյուղերում ներառված գործունեության մեջ՝ մոտ 20 տեսակ ապրանքների թողարկմամբ: Համեմատության համար դիտարկվել է ՀՀ տնտեսությունում

[7] Տե՛ս **Ա. Հ. Բայադյան,** Ֆինանսական միջոցների կազմավորման, օգտագործման և բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում, Եր., 2016, էջ 22:

զարգացման գերակա ուղղություն հայտարարված ամենամեծ մասնակցությունն ապահովող ոգելից խմիչքների արտադրությունը, սննդի արդյունաբերությունը և զբոսաշրջությունը, սակայն դրանցում մասնակիցների թիվն անհամեմատ ավելի ցածր է, քան շինարարությունում ներգրավվածներինը[8]:

ՀՀ տնտեսության հիմնական խնդիրը այսօր որակյալ աճ ապահովող իրական հատված ունենալն է: Ե՛վ արտաքին, և՛ ներքին շուկաների ուսումնասիրության վրա հիմնված տնտեսական զարգացման մոդելների արդյունավետ զուգակցումը ՀՀ տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներից մեկն է: Չնայած կառուցվածքային շարժընթացին՝ Հայաստանի տնտեսությունը համաշխարհային տնտեսական հարթակում մրցունակ չէ: Արձանագրված տնտեսական աճի արդյունքում ամբողջական առաջարկի և պահանջարկի հարաբերակցության փոփոխությամբ պայմանավորված երկրում նոր հավասարակշռության վիճակը որակապես, իհարկե, կատարելագործել է տնտեսության իրական հատվածի կառուցվածքը: Տնտեսական միջավայրում արձանագրված տեղաշարժերը ուղղակիորեն ազդել են տնտեսական աճի բնույթի փոփոխության վրա՝ տնտեսական աճի որակի գնահատման և պահպանման խնդիրը դարձնելով ավելի հրատապ:

Նախորդ ցուցանիշը բնութագրում էր ներդրումների կառուցվածքի ազդեցությունը տնտեսության կառուցվածքի վրա: Իսկ ներդրումների կառուցվածքի ազդեցությունը տնտեսական աճի կառուցվածքի վրա ներկայացնելու համար հաշվարկվել է հետևյալ գործակիցը՝

$$\text{Գործակից}_{\text{ոլորտ}} = \frac{\Delta\ \text{ՀՆԱ–ի աճին նպաստման չափը /\%/}}{\Delta\ \text{Ներդրումների տեսակարար կշիռը ոլորտում /\%/}} > 0$$

Գործակցի միջոցով գնահատվում է, թե ոլորտում իրականացված ներդրումների տեսակարար կշռի 1 % աճը ինչպես է ազդել տվյալ ոլորտի տնտեսական աճին նպաստող ցուցանիշի վրա: Ինչքան ցուցանիշը մեծ է, այնքան ներդրումները առավել արդյունավետ են եղել տվյալ ոլորտում:

Ցուցանիշների շարժընթացը վկայում է, որ տնտեսության իրական հատվածի՝ ռազմավարական նշանակություն ունեցող գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում ներդրումների կառուցվածքը բացասական ազդեցություն է ունեցել տնտեսական աճի կառուցվածքի վրա:

---

[8] Տե՛ս **Կ. Աթոյան և ուրիշներ,** Մասշտաբային բնակարանաշինությունը՝ որպես ներքին արտադրության խթանմամբ տնտեսական աճի ապահովման և համաչափ տնտեսական զարգացման ուղղություն, Եր., 2016, էջ 10-11:

Աղյուսակ 4

	Գյուղատնտեսություն			Արդյունաբերություն		
	Ոլորտը ՀՆԱ-ում /%/	Ոլորտը ներդր. /%/	$\frac{\Delta 1}{\Delta 2}$	Ոլորտը ՀՆԱ-ում /%/	Ոլորտը ներդր. /%/	$\frac{\Delta 1}{\Delta 2}$
2004	9	0.0	-	3.7	41.7	-
2005	18.0↓	0.01↑	-1270	10.1↓	46.8↑	1.3
2006	0.8↓	0.1↑	-191	-0.8 ↓	39.9↓	1.6↓
2007	12.4↑	0.0↓	-116	4.4↑	47.3↑	0.7
2008	2.9↓	1.9↑	-5	4.4	49.1↑	0
2009	0	0.9↓	2,9↓	-7.7	35.1↓	0.9↓
2010	-84.6↑	0.8↓	846 ↓	50↑	49.0↑	4.15
2011	51.1↑	0.5↓	-452	44.7	52.1↑	-1.7
2012	26.4↑	4.9↑	-5.6	15.3↓	37.0↓	1.9↓
2013	42.9↑	1.4↓	-4.7	31.4↑	42.85↑	2.8
2014	45.5	0.8	-	-3.0	78.5	-
2015	72.7↑	1.1↓	90.7	36.4↑	55.8↓	

Աղյուսակ 5

	Շինարարություն			Ծառայություններ		
	Ոլորտը ՀՆԱ-ում /%/	Ոլորտը ներդր. /%/	$\frac{\Delta 1}{\Delta 2}$	Ոլորտը ՀՆԱ-ում /%/	Ոլորտը ներդր. /%/	$\frac{\Delta 1}{\Delta 2}$
2004	20.8	1.1	-	42.6	57.0	-
2005	38.8↑	4.1↑	6	26.6↓	49.1↓	2↓
2006	57.1↑	3.9↓	-91.5	35.3↓	56.1↑	-1.2
2007	32.8↓	0.2↓	6.6↓	29.2↑	52.5↓	-1.7
2008	26.5↓	0.3↑	-63	45.6↑	48.7↓	-4.3
2009	-75.4↓	0.1↓	510↓	0↓	63.9↑	-3
2010	23.1↑	0.5↑	246.3	73.1↑	49.7↓	-5.1
2011	-44.7↓	0.4↓	678↓	53.2↓	47.0↓	7.4↓
2012	8.3↑	2.4↑	26.5	38.9	55.7↑	-1.6
2013	-22.9↑	5.18↑	-11.2	45.7↑	50.6↓	-1.7
2014	-15.2	3.4	-	72.7	17.4	-
2015	-9.1↑	1.7↓	-1.74	0.0↓	41.4↓	-3.03

Այսպիսով, գործակիցների հաշվարկմամբ ստացված հիմնական գնահատականը այն է, որ տնտեսության իրական հատվածի համար ռազմավարական նշանակություն ունեցող արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում ներդրումները արդյունավետ չեն տեղաբաշխվել, ուստի չեն նպաստել տնտեսության զարգացմանը, իսկ ոչ արտահանելի շինարարության ոլորտում ցուցանիշը եղել է խիստ անկայուն՝ պայմանավորված ոլորտի՝ տարեցտարի նվազող դերով: Տնտեսական աճի ոլորտային առաձգականության գնահատականները փաստում են, որ գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը հետճգնաժամային ժամանակահատվածում զգալի ճկունություն են դրսևորել: Համախմբելով վիճակագրական վերլուծությամբ կատարված եզրակացություններն ու ներկայացված գործակիցների հաշվարկմամբ ստացված գնահատականները՝ կարելի է հետևություն անել, որ տնտեսական աճի նկատմամբ զգայուն արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում ներդրումների արդյունավետ տեղաբաշխումը կխթանի որակյալ տնտեսական աճը և զարգացումը:

Բանալի բառեր՝ *մակրոտնտեսական հավասարակշռություն, կայունություն, տնտեսական աճ, որակական աճ, տնտեսական զարգացում, ներդրումներ*

ЛИАНА КАРАПЕТЯН – *К вопросу об эффективном распределении инвестиций в РА.* – Экономический рост в Армении характеризуется как некачественный, а структура экономики нуждается в совершенствовании. Инвестиции в стратегических отраслях реального сектора не были эффективно распределены и не способствовали экономическому развитию. В отраслях, чувствительных к экономическому росту, эффективное распределение инвестиций способствует качественному экономическому развитию. Отраслевые оценки эластичности экономического роста показывают, что в посткризисный период сельскохозяйственные и промышленные сектора показали значительную устойчивость и гибкость.

Ключевые слова: *макроэкономический баланс, экономический рост, качественный рост, экономическое развитие, инвестиции*

LIANA KARAPETYAN – *On the Issue of Effective Allocation of Investments in RA.* – In the country economic growth is characterized as not qualitative, and the structure of the economy needs to be improved. In strategic sectors of the real sector of economy investments were not effectively allocated and did not contribute to economic development. In the sectors, sensitive to economic growth, an efficient allocation of investment can promote high-quality economic growth and development. Sectorial estimates of the elasticity of economic growth show that in the post-crisis period, the agricultural and industrial sectors showed considerable resilience and flexibility.

Key words: *macroeconomic balance, stability, economic growth, qualitative growth, economic development, investments*